



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 27 ՅՈՒՆԻՍ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 16

ԱՂՈԹՔ ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ

Պահպանէ զիս, ճ՛վ Աստուած, քեզի ապաւինած եմ:
Տիրոջ ըսի. «Դուս ես Տէրս, քեզմէ գատ ուրախութիւն չունիմ»:
Ինչ փառահեղ եմ երկրի վրայ սուրբերը.
ամբողջ փափափս է՝ անոնց հետ ըլլալ:
Կ'օրհնաբանեմ Տէրը, որ իր խորհուրդներով կ'առաջնորդէ զիս,
նոյնիսկ գիշերը զիս կը խրատէ խղմտանքիս միջոցաւ:
Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ.
Երբ անիկա իմ կողքիս է՝ ոչինչ կրնայ զիս սասանեցնել:
Ահա թէ ինչու սիրտս ուրախ է,
հոգիս ցնծութեան մէջ է,
եւ մարմինս վստահութեամբ կը հանգչի,
որովհետեւ գիտեմ թէ զիս մեռելներու աշխարհին մէջ պիտի չձգես,
եւ պիտի չթողուս որ քու հաւատարիմ ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ:
Կեանքի նամբան ցոյց կու տաս ինձի.
Ներկայութիւնդ զիս ցնծութեամբ կը լեցնէ,
եւ քու մօտդ ըլլալը յաւէտ երջանկութիւն է:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վձենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աշ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՄՆ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 15:12-58 եւ ԳԼԽ 16)



ՄԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ (15:12-34)

Պարմական ստոյգ վկայութիւններ փալէ յետոյ Քրիստոսի յարութեան, Պօղոս Առաքեալի կ'անցնի այս անգամ խօսելու, բացատրելու մեր յարութեան մասին, որովհետեւ ոմանք կ'առարկէին ըսելով. «Մեռելներու յարութիւն չկայ»: Սա կը նշանակէ թէ ոմանք Քրիստոսի յարութեան կը հաւատարային կամ կ'ընդունէին, իսկ մեր յարութիւնը՝ ոչ: Եթէ այդպէս է, Առաքեալը կ'ըսէ. եթէ մենք յարութիւն պիտի չառնենք, ուրեմն Քրիստոս ալ յարութիւն առած չէ. իսկ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ուրեմն «**զուր է մեր քարոզութիւնը, զուր է նաեւ ձեր հաւատքը**» (14 հմր): Քրիստոսի յարութիւնը պարզապէս պարմական դէպք մը չէ: Քրիստոսի յարութիւնը պարզապէս ինք եր կեանքի վերադառնալ չէ, այլ՝ այնպէս ինչպէս Քրիստոսի խաչելութիւնը մեզ կը փրկէ մեղքէ, նոյնպէս ալ Քրիստոսի յարութիւնը՝ մեզ կ'արդարացնէ (Հռոմ 4:25):

«Ուրեմն ի՞նչ. անոնք որոնք Քրիստոսի հաւատարացին եւ մեռան՝ կորսուած են ընդմիշտ: Եթէ այդպէս է, եւ միայն այս կեանքին համար յոյս դրած ենք Քրիստոսի վրայ, մարդոց մէջ ամենէն խղճալիներն ենք» (18-19 հմր):

«Ինչպէս Ադամէն ծնածները կը մեռնին, այնպէս ալ Քրիստոսէ ծնածները բոլորն ալ պիտի կենդանանան: Բայց իրաքանչիւրը իր կարգին» (22-23 հմր): Այս փողերով Պօղոս Առաքեալ համեմատական մը կ'ընէ Ադամի ու Քրիստոսի միջեւ: Ծննդոց գիրքը շատ յարակօրէն ցոյց կու տայ, թէ մարդ արարածը արդէն իսկ մահկանացու էր, որովհետեւ հողէն սրեղծուած էր, բայց անմահութեան կարելիութիւնը ունէր այնքան արեւն որ կը ճաշակէր կենաց ծառէն: Իսկ այսպէղ մահ ըսելով կը հասկնայ իբրեւ մեղքին պարիժը, որ աշխարհ մտաւ Ադամով, անոր անհնազանդութեամբ: Իսկ Քրիստոսէ ծնածները վերակենդանանան: «Այժմ երախայրիքը՝ Քրիստոս, իսկ իր երկրորդ գալուստին՝ բոլոր իրեն պարկանողները» (23 հմր):

Եւ ասա անմիջապէս Պօղոս Առաքեալ կը վերադառնայ նիւթին այս անգամ երկու այլ օրինակներ փալով.

1. «**Եթէ մեռելները բնաւ ալ յարութիւն պիտի չառնեն, հապա ինչո՞ւ մեռելներուն փոխարէն կը մկրտուին**» (29 հմր): Բազմաթիւ բացատրութիւններ փրուած են այս նախադասութեան: Ինչ ալ ըլլան այդ բացատրութիւնները, Առաքեալը այսպէղ յիշելով այս փողերը, ոչ թէ իր համամիտ ըլլալը ցոյց կու տայ, այլ՝ թէ ինչպէս եթէ յարութեան չէք հաւատար, հապա այն սովորութիւնը որ կ'ընէք վասն ինչ բանի համար կ'ընէք:
2. «**Ինչո՞ւ կը շարունակենք նեղութիւն կրել**» (30 հմր): Իսկ Առաքեալին պարագան, որ յանձն կ'առնէ հալածանքն ու նեղութիւնը, վասն ինչի՞: Որովհետեւ գիտէ այն խօսքը որ կ'ըսէ. «մի վախնաք անոնցմէ որ մարմինը կը սպաննեն, այլ անկէ որ հոգին գեհեմի արժանի կը դարձնէ»:

Ուրեմն ի՞նչ, «**եթէ մեռելներու յարութիւն չկայ՝ ուրեմն, իմենք, քանի վաղը պիտի մեռնինք**», ինչպէս մարդիկ յաճախ կ'ըսեն (32-33 հմր): Պօղոս Առաքեալ կը զգուշացնէ, «մի խաբուիք», այսինքն՝ մի սնորհիք: «**Մթափեցէք եւ արդար կեանք ապրեցէք. մի մեղանչէք**» (34 հմր): Առաքեալը կոչ կ'ընէ բարոյական զգաստ եւ ողջմիտ կեանք մը ապրելու: Որովհետեւ շատեր, որոնք մերժած էին յարութեան վարդապետութիւնը, արդէն իսկ բարոյական անկումի մէջ էր նաեւ իրենց կեանքը:

Սա ցոյց կու տայ, թէ շատեր զԱստուած չեն ճանչցած: Իրենք զիրենք այնպէս մը կը ներկայացնէին, թէ զԱստուած կը ճանչնան (34 հմր), բայց իրենց մտածելակերպն ու կենցաղը ցոյց կու տար թէ ոչ:

ՅԱՐՈՒՅԵԱԼ ՄԱՐՄԻՆԸ (15:35-58)

«Բայց ի՞նչպէս յարութիւն կ'առնեն մեռելները. կամ ի՞նչպիսի մարմինով պիտի գան» (35 հմր): Հարցում մը, որ ոչ միայն կորնթացիներուն միտքը զբաղեցուցած է, այլ նաեւ այսօր մեզմէ իրաքանչիւրինը, երբ մանաւանդ փարբեր փարբեր կերպերով մարդը մահը կը ճաշակէ, ուր այլեւս ոչ մէկ հետք կայ մարմնի: Ուրեմն այսպիսի պարագաներու ի՞նչպէս յարութիւն կ'առնեն, կամ ի՞նչպիսի մարմինով:

Առաքեալը կը պատասխանէ օրինակ վերցնելով բնութիւնը ըսելով. «Անմիտ շուրջդ նայիր եւ սորվիր բնութենէն, եւ հոն պիտի գտնես հարցումիդ պատասխանը» (36 հմբ): Իսկ գալով երկրորդ հարցումին, թէ ի՞նչպիսի մարմինով. «Ինչպէս որ նոյնը չեն սերմանուածը եւ բուսածը, այլ սերմանեալը մերկ եւ անպաճոյճ փոքրիկ հատիկ մըն է, իսկ բուսածը գեղեցիկ եւ վայելուչ բոյս մըն է, թէւ իրենց իսկութեան մէջ նոյն են, բայց երկուքին միջեւ մեծ փարբերութիւն կայ: Նոյնպէս ալ մարմինները ըստ էութեան նոյնն են, բայց ըստ որակի եւ ըստ ձեռի՝ փարբեր» (Շնորհք Պարբ Գալուստեան):

«Նախ շնչաւորը, ապա՝ հոգւորը» (46 հմբ): «Այս օրէնքին համաձայն, Ադամ չէր կրնար ի սկզբանէ բարոյապէս կատարեալ սրբեղծուիլ: Ադամին կատարելութիւնը մանուկի մը կատարելութիւնն էր, անմեղ բայց ոչ սուրբ, որովհետեւ սրբութիւնը պատրաստ շինուած հոգեւոր ապրանք մը չէ, որ կը փրոյնի մարդուն, այդ արդիւնք է բարիին փեսական նախընտրութեան եւ չարին՝ մերժման: Սրբութիւնը իր առջեւ ունի անսահման ճամբայ, որուն ծայրը Աստուած կեցած է: Հետեւաբար, մարդուն գերագոյն նպատակը այս է մշտական ձգտում առ Աստուած» (ՇՊԳ):

Այնպէս ինչպէս ֆիզիքական մարմին փրուած է ֆիզիքական պայմաններու համաձայն ապրելու, նոյնպէս ալ հոգեւոր մարմին պիտի փրոյնի հոգեւոր պայմաններու համաձայն ապրելու: Ուրեմն այլակերպումի պայմանը կայ, որպէսզի կարենանք ժառանգել յաւիտենական կեանքը, որովհետեւ մեր ներկայ պայմանները, այսինքն՝ մարդը իր բնական եւ մահկանացու բնութեամբ չի կրնար ժառանգել:

Ի վերջոյ, Առաքեալը կը թելադրէ որ հաստատ մնան իրենց հաւատքին մէջ, որպէսզի կարենան դէմ դնել սուր ու մոլար ուսուցումներուն: Առաւել եւս, փոխանակ խօսքի եւ վիճաբանութեան մէջ ըլլալու Տիրոջ գործին մէջ ըլլան: Իսկ որն է Տիրոջ գործին մէջ ըլլալը:

ԵՐՈՒՄԱՂԷՍԻ ԵԿԵՂԵՑԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ (16:1-4)

Երուսաղէմի առաքելական ժողովէն սկսեալ այս պարտականութիւնը յանձնուեցաւ Պօղոս Առաքեալին, իբրեւ գուզընթաց պարտականութիւն մը իր առաքելութեան (Գաղ 2:9-10): Առաքեալը նաեւ կը թելադրէ որ ամէն ինչ կարգ ու կանոնով եւ յառաջուց պատրաստ ըլլան, որպէսզի վերջին պահուն իրար անցնելու վիճակ չսրբեղծուի:

ՊՕՂՈՍԻ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ (16:5-12)

Առաքեալը նաեւ կը ներկայացնէ իր ծրագիրները, որ այլ ուրիշ փեղեր եւս հանդիպելիք ունի իր առաքելութիւնը շարունակելու, հետեւաբար իր ուշ վերադառնալը Կորնթոս առիթ կու տայ Կորնթացիներուն իրենց հանգանակութիւնը ըստ այնմ ընելու:

Պօղոս Առաքեալ իր այս նամակը կը գրէ Եփեսոսէն, եւ կը յիշեցնէ իր նամակին մէջ որ կ'ուզէ քիչ մը եւս Եփեսոս մնալ, որովհետեւ լաւագոյն առիթ է քարոզելու Աւերարանը: Հակառակ այն իրողութեան, թէ Եփեսոսի մէջ հակառակորդներ ալ կան, բայց ինք կ'ուզէ իր գործը շարունակել:

ՎԵՐՋԻՆ ՅՈՐՂՈՐՆԵՐ ԵՒ ՈՂՋՈՅՆՆԵՐ (16:13-24)

Ի վերջոյ, անգամ մը եւս Պօղոս Առաքեալ իր թելադրութիւնը կ'ընէ Կորնթոսի համայնքի հաւատարմացեալներուն ըսելով. «Արթուն եղէք, հաստատուն մնացէք ձեր հաւատքին վրայ, քաջ եղէք, զօրացէք: Ինչ որ կ'ընէք՝ սիրով ըրէք» (13-14 հմբ): Արթուն մնալու պատուէր, թէ՛ թշնամիին դէմ դնելու, եւ թէ՛ Քրիստոսի գալուստին պատրաստ ըլլալու: Հաստատուն մնացէք Աւերարանի հաւատքին վրայ, ինչ որ քարոզուեցաւ իրենց:

Տակաւին, նամակը չփակած Առաքեալը կը յիշեցնէ քանի մը անձնաւորութիւններ, որոնք Առաքեալին այցելութեան էին եկած, բայց իրենց ծառայութեան դիմաց պէտք եղած յարգանքը եւ գնահատութիւնը չէին գրած:

Ի վերջոյ, Առաքեալը կը թելադրէ եւ կ'ըսէ. «Մարան-աթա», ինչ որ նաեւ Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «Տիրոջ գալուստը մօտ է» (5:8): Ազդարարական արտայայտութիւն մըն է, որ ըսել կ'ուզէ միշտ պատրաստ եղէք, որովհետեւ ամէն վայրկեան կրնայ Տէրը գալ, եւ ուստի պատրաստ ըլլալ գինք դիմաւորելու: Եւ կը մաղթէ Յիսուս Քրիստոսի շնորհքը բոլորին: Որովհետեւ ուր Յիսուս Քրիստոսի շնորհքը կայ, հոն կարգ ու կանոն կայ, եղբայրսիրութիւն, սէր, համերաշխութիւն, ինչ որ կը պակսէր Կորնթացիներուն: Ուրեմն թող Քրիստոսի շնորհքը այդ պակասը լեցնէ: Ինչպէս նաեւ Առաքեալին սէրը անոնց, որոնք Քրիստոս Յիսուսի կը պատկանին: Անոր համար ալ Առաքեալը յանձն առաւ ամէն փեսակի նեղութիւն, հալածանք որպէսզի այդ սէրը փոխանցէ եւ այդ սիրով Քրիստոսի հրաւիրէ մարդիկը: Եւ Առաքեալը ինք կը ցանկայ որ այս գրուածները որպէս ճշմարտութիւն կատարուին իր «Ամէն» արտայայտութեամբ: